ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցը բավարարելու մասին վճիռ կայացվելու դեպքում հայցի ապահովման միջոցները պահպանվում են մինչև վճռի կատարումը: Հայցը բավարարելու մասին վճռի կայացումից հետո հայցի ապահովման միջոցը դատարանի որոշմամբ կարող է վերացվել հայցի ապահովում պահանջած անձի միջնորդությամբ:

Հայցի բավարարման պայմաններում Դատարանը գտնում է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 14.07.2023 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը պետք է պահպանել մինչև վճռի կատարումը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 194-րդ հոդվածներով, 234.12-րդ հոդվածի 1-ին մասով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. «ԻՓԻԷՍ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲ ընկերության՝ թիվ ԵՋԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/12 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի արդյունքներով «ԻՓԻԷՍ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ընդգրկելու վերաբերյալ «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲ ընկերության ղեկավարի «որոշում»-ն անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել:

2. Անվավեր ճանաչել «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲ ընկերության տնօրեն Ա. Գրիգորյանի՝ թիվ ԵՋԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/12 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի արդյունքներով «ԻՓԻԷՍ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ընդգրկելու վերաբերյալ գրությունը (որոշումը):

3. «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲ ընկերությունից հօգուտ «ԻՓԻԷՍ» ՍՊ ընկերության բռնագանձել 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

4. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

5. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 14.07.2023 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը պահպանել մինչև վճռի կատարումը:

6. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ**